ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«06» հոկտեմբերի 2026թ. Ն ՄՈ/569 - Ա

ք. Արմավիր

ԱՐԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 15-ի N 1287-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 2-րդ, 4-րդ, 9-րդ, 26-րդ և 27-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2025 թվականի դեկտեմբերի 18-ի N ՄՈ/1043-Ա որոշումը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագիրը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Արամ Հովհաննիսյանի 2026 թվականի հոկտեմբերի 5-ի դիմումը.

ո ր ո շ ու մ ե մ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար՝ Արամ Հովհաննիսյանին տրամադրել 2024-2025 թվականների աշխատանքային տարվա տեղափոխված արձակուրդից մաս՝ 14 աշխատանքային օր տևողությամբ և 2025-2026 թվականների աշխատանքային տարվա արձակուրդի մասը՝ 1 աշխատանքային օր տևողությամբ՝ 2026 թվականի հոկտեմբերի 12-ից 30-ը ներառյալ՝ 15 աշխատանքային օր տևողությամբ:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի պարտականությունների կատարումը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի անձնակազմի

կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ՝ Գոռ Գասպարյանին:

3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի գլխավոր ֆինանսիստի պարտականությունների կատարումը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Արայիկ Հակոբյանին:
4. Արամ Հովհաննիսյանին աշխատանքի մեջ համարել 2026 թվականի նոյեմբերի 2-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Восстановимая подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179 **Վ.ԽԱՉԱՏՐՅԱՆ**